ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/31, 06.03.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական պարագաների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին չկայացած հայտարարելու «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ Մելիք Ադամյան 1, Երեւան քաղ.

Բողոք բերող անձ՝ «Մեգիէլ» ՍՊԸ,
Տնօրեն՝ Սամվել Փարիզյան
Հասցե՝ Դ. Դեմիրճյան 40, Երեւան քաղ.
Հեռ. 010-565476, 091-412436
Էլ. փոստ՝ office@megiel.am

Պատվիրատու՝ «Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ»
Հասցե՝ Գ.Նժդեհ 3/3, Գյումրի քաղ., Շիրակի մարզ, ՀՀ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝
ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2

ԲՈՂՈՔ

1. Վեճի առարկան.

1.1 «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգ:

1.2 Մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 06.03.2019թ ժամը 12:00 է:

1.3 Հայտերի բացման օր է սահմանված 06.03.2019թ, ժամը՝ 12:00:

1.4 ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնմանը մասնակցելու նպատակով «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրում արձանագրել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ:

2.Բողոքի փաստական եւ իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի *«գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը»*

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2 րդ մասի *«Գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.*

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջև մրցակցության խրախուսում.

Ի ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N 9524-13 1
«06» 03 2019թ.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Համաձայն օրենքի 13-րդ հոդվածի «1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Նկնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:»

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ուսումնասիրելով ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրերն արձանագրում ենք, որ այն չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:

Հրավերի տեխնիկական բնութագրերում առկա են այնպիսի ձեւակերպումներ որոնք հստակ հղում են անում կոնկրետ ֆիրմային անվանման, էսքիզին, մոդոլին եւ առկա են նույնականացնող այնպիսի չափորոշիչներ որոնց առկայությամբ գնման առարկա կարող է ապահովել հստակ մեկ արտադրող:

Օրենսդիրը վերը հիշատակված նորմով իմպերատիվ կանոն է սահմանել, որ «Գնման առարկայի հատկանիշները *չպետք է պահանջ կամ հղում պարունակեն* որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի *«կամ համարժեք»* բառերը»:

Մինչդեռ, ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրի 5, 15, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27-րդ չափաբաժինների նկարագրով խախտվել է հիշատակված նորմի պահանջը, եւ այդ չափաբաժիններում համարժեք ապրանքատեսակ ներկայացնելու հնարավորությունից հնարավոր հայտատու ընկերությունները զրկվել են մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին, քանի որ տեխնիկական բնությագրերում շրջանցվել է «կամ համարժեք» եզրույթը:

Օրինակ 15-րդ չափաբաժնով պատվիրատուին անհրաժեշտ է դիագնոստիկ կաթետորներ որտեղ նշված է արյան ծավալային հոսքի հստակ արագության չափ, որը սահմանափակում է այլ մասնակիցների մասնակցությունը ովքեր կարող են ներկայացնել արյան ծավալային հոսքի մեկ այլ արագության, համարժեք ապրանք, որը ֆունկցիոնալ առումով հնարավորություն է տալիս հասնել նույն արդյունքին, ինչպես պահանջվում է տեխնիկական բնութագրով:

Օրինակ 23 չափաբաժնով պատվիրատուին անհրաժեշտ է բալոնային կաթետորներ որտեղ նշված է բալոնային նոմինալ եւ մաքսիմալ ճնշումը, որը տարբեր արտադրողների մոտ լինում են տարբեր, սակայն ֆունկցիոնալ առումով թույլ են տալիս հասնել նույն արդյունքին ինչպես նշված է տեխնիկական բնութագրում:

Արձանագրում ենք նաեւ, որ ներկայացված տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ բժշկական պարագաների նկարագրի ձեւակերպումը հստակ ներկայացված չէ, որն էլ մասնակիցներին ճշգրիտ ընկալելու հնարավորությունից զրկում է, թե հրավերով ինչ գնման առարկա է անհրաժեշտ պատվիրատուին:

Սա վկայում է այն մասին, որ պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին եւ հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ:

Վիճարկվող հրավերով մասնակցությունն ըստ էության առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

22 կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետը սահմանում է, որ *«Գնման առարկայի բնութագրերը եւ մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ....»:*

Պատվիրատուն օրենքին անհամապատասխան հրավեր ներկայացնելով սահմանափակում է հնարավոր հայտատու մասնակիցներին մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին:

Իրավական նորմերի խախտմամբ կազմված եւ ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով եւ դրանց իրականացման համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):

3. Պահանջ.

3.1. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել չկայացած համարելու ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգը:

3.2 Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքը բավարարվելու դեպքում վերադարձնել բողոքի քննության համար նախատեսված վճարը:

Կից ներկայացվում են.

1. Անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
2. բողոք ներկայացնելու համար վճարման անդորրագրի պատճեն:

«Մեգիկլ» ՍՊԸ
Տնօրեն Սամվել Փարիզյան
06 մարտի, 2019թ